կան խումբը։ Օտարահայատակները պատասխանեցին, Թէ իրանք կը ներկայացնեն. տեսնենք ինչպէս կարող են արգելել։ Ներկայացումը տեղի ունեցաւ, որի ժամանակ մի քանի սպիտակգլուխներ—երևի յատկապէս ուղարկուած—յանկարծ նեբա մտան և դիտել սկսեցին։ Նրանց հրաւիրեցին նստելու։ Նրանք ընդունեցին հրաւէրը և մինչև վերջը ապուշ կրթած դիտեցին և տեսան, որ ղուրանին հակառակ բան չկար «օյինբազների» սարքած խաղում։ Բոլոր հանդիսականները շատ գոհ էին իրանց համար այս նոր տեսարանով։ Շատերը տումակ գնել էին, բայց երկիւղից չեկան, իսկ եկողները զարմացան իրանց մոլլաների անմիտ հրամանի վրայ։

Գալուստ

ՄԵՐ «ԽՈԶԷԻՆՆԵՐԸ» ԵՒ «ԱՆԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ»

«Ընթերցասիրութիւնը չի զարդանում հայ հասարակութեան մէջ և հայ գրքի ու պարբերական մամուլի նուաճումները, ընթերցող շրջաններում, չափազանց դանդաղ են առաջ գնում.—ահա մեր իրականութեան ամենացաւոտ հարցերից մէկը, որը միշտ կոշմարի պէս ցցուած է եղել մեր գրագէտների և ամբողջ գրականութեան առաջ, նրա սկզբնաւորութիւնից մինչև այժմ։ Մեր գրականութիւնը իր ծանրաշարժ առաջխաղացութեան միջոցին միշտ ուժգնապէս բաղխուել է այդ կոշմարին և երևի դեռ երկար նրա ճակատը քերծուածներ պիտի ստանայ այդ բաղխումներից։

Ինչպէս և ինչո՞վ կարելի է բացատրել հասարակական այս հիւանդոտ երևոյթը։ Մեր մամուլը, բնականաբար, շատ է զբաղուում դրանով և առանձնապէս «Մուրճը» իր «ներքին տեսութիւններում» յաճախ է շօշափել այդ հարցը, մօտենալով նրան զանազան կողմերից և տարրալուծելով իրերն ու երևոյթները, որքան այդ թոյլ են տուել հանգամանքները։

«Մուրճի» յարգելի յօդուածագիրը այս տարուայ 9-րդ համարում քննելով անընթերցասիրութեան պատճառները և ընթերցողները որոնելով հայերէն իմացող «ինտելիգէնտ» շըր-

Յունուար, 1905.

ջանները—ի հարկէ բաց թողնելով հայերէն չիմացող լեգիօն-ները—և գիւղական մասսաներում, շատ սխուր եղրակացու-թեան է հասնում։ Մորալ պահանջներից զուրկ հայ «ինտէլի-գէնտ» դասը ուղղակի չէ տալիս հայ ընթերցողներ։ Ընթեր-ցող դասակարգ չի կարողանում արտադրել և մեր գիւղական մասսան՝ իր խղճալի տարրական դպրոցով, հաղորդակցական նախապրհեղեղեան միջոցներով։ Ուրեմն ինում է, ըստ յօդուածագրի, այն սակաւաթիւ կոնտինգենտը, որ կոչւում է հայ ընթերցող և որն անկարող է ապահովել հայ գրական գործիչին իր ապրուստ։

«Հայ ընթերցողների կոնտինգենտը»։—Ո՞րտեղից է գոյա-նում այդ կոնտինգենտը։ Դրա աղբիւրն է հայ միջին կոչուած դասակարգը, որից դուրս են գալիս հայ ուսուցիչներ, երկու հատիկ միջնակարգ դպրոցների աշակերտներ, արհեստաւորներ, ծառայողներ և որոնք կազմում են, իսկապէս, հայ ընթերցող դասակարգը։ Դրանց վրայ աւելացրէք և այն փոքրաթիւ ան-ձանց, որոնք աչքի ընկնող մեծ գիւղերում ստանում են ըն-թերցանութեան ճաշակ, շնորհիւ հասատատուած գրադարան-ընթերցարանների, և գիտակից երիտասարդութեան փոքրիկ շեր-ջանի, նաև այն պատանիներին, որոնք գիւղից քաղաք տեղափոխ-ուելով և բարեպատեհ հանգամանքների մէջ ընկնելով ձգտ-տում են ինքնակրթութեան և դրա աղբիւրը գտնում են հայ գրականութեան մէջ։ Այսպիսով հայ ընթերցող դասի պատ-կերը կը լրանայ։ Իսկ թէ մեր միջին դասակարգը ըն-թերցողների ինչ տոկոս է տալիս, այդ թողնենք. թողնենք, որովհետև այստեղ էլ մխիթարական քիչ բան կայ։

Հայ ընթերցողների կոնտինգենտի մի փոքրիկ տոկոսը կազմում են խանութների, գրասենեակների ծառայողները և զա-նազան գործակատարներ ու բանւորներ, որոնք իրանց ունե-ցած չնչին ազատ րոպէների գործադրութեան և մանաւանդ զբաղումների մէջ իսկ, այս և այն կերպ միշտ կախուած են կամ իրանց կախուած են զգում «խոզէյիններից»։ Իսկ թէ դրանք, իբրև ընթերցողներ, ի՞նչքան քաջալերութիւն են գտնում այդ խոզէյիններից և իրանց շրջապատող պայմաններից—պարզենք երկու խօսքով։

Յայտնի է արդէն, որ խանութներում, գրասենեակներում, արհեստանոցներում, գործարաններում և այլ տեղերում, մեր «խոզէյինները» բնաւ հոգ չեն տանում իրանց ծառայողների, աշ-խատաւորների մտաւոր պահանջների գոհացման համար։ Սա-կաւ տեղերում այդ նպատակով շատ-շատ ստացւում է մի օ-րաթերթ։ Իսկ օրաթերթի տուած մտաւոր սնունդը բոլորովին

բաւարար չի կարող համարուել։ Դրա փոխարէն դեռ ևս շարունակում է տիրել այն տխուր իրողութիւնը, որ «խոզէինը» չի ուզում տեսնել, չի կարողանում տանել, երբ գրասենեակում կամ խանութում ծառայողը ազատ ժամերին գիրք, լրագիր կամ մի այլ բան է կարդում։ Ինչ չէ պատահել, երբ այդ բանի համար ծառայողները յանդիմանուել և նոյնիսկ արտաքսուել են։ Զգիտես՝ ցաւալի, զայրացուցիչ, թէ յուսահատական ևս նուաստ այս երևոյթը։ Բայց դեռ այդ չէ բոլորը։ Կարող են ասել, որ ծառայողը, կամ բանուոր-արհեստաւորը իրանց մտաւոր պահանջներին գոհացում կարող են տալ գործից դուրս—ազատ ժամերին, կիրակի և տօն օրերին։ Բայց այդ դիւրութիւնից ևս զուրկ է խեղճ ծառայողը։ Նախ՝ նա իր ծառայութեան համար շատ չնչին վարձատրութիւն է ստանում։ Իրանց չնչինութեամբ դրանք, շատ յաճախ, ուղղակի ծաղրանքի տպաւորութիւն են թողնում։ Պարզ է ուրեմն, որ այդպիսի վարձատրութեամբ ծառայողը, մանաւանդ, երբ մի ամբողջ ընտանիքի պահպանութեան հոգսն է քաշում, անկարող է, թէկուզ մի փոքրիկ տոկոս—տարեկան 50 րուբլի—դրքի և լրագրի յատկացնել։ Գուցէ առարկողներ կը լինեն, թէ կարող են գոյութիւն ունեցող գրադարաններից օգտուել։ Այդ առարկութիւնն էլ ինքն ըստ ինքեան կը ջրուի, եթէ դանք այն հարցին, թէ ծառայողը ինչքան ազատ ժամանակ ունի իր տրամադրութեան տակ։

Մեր առևտրական և վաճառական դասակարգը, առ հասարակ, դեռ ևս կուլտուրական ստոր աստիճանի վրայ՝ չգիտէ իր ժամանակը այնպէս գործադրել, որ համ Աստծուն հաճելի լինի, համ էլ մարդկանց։ Լոյսը բացուեց, արդէն խանութ, գեազ ու դեազդեահ. և նրանց ծառայողները կազմ ու պատրաստ են և այսպէս մինչև այն ժամանակ, քանի դեռ փողոցներում շարժում կայ։ Միծաղելի է մտածել, թէ գործն է այդքան ժամանակ պահանջում։ Ամեն մարդ էլ տեսած կը լինի, թէ ինչպէս, շատ յաճախ, ծիծաղելի դրութեան մէջ, սագի պէս մի ոտի վրայ կանգնած, անգործութիւնից յօրանջում են խանութի սպասաւորները։ Եւ կամ թէ, ոմ յայտնի չէ մեր հասարակութեան դատարկապորտութիւնը։ Ամբողջ մի ստուար դասակարգ կայ, որի բան ու գործն է առաւօտից մինչև երեկոյ, ժամանակ անցկացնելու և զուարճանալու համար շրջել խանութից-խանութ՝ ուղղակի ոչինչ չգնելու նպատակով։ Իզուր են խանութպանների սիրաշահ ժպիտները ու ճարպիկութիւնները՝ դրանց մի բան վաճառելու։ Նրանք միայն ժամեր են կորցնում, ապարդիւն ժամեր։

Մթթէ դա անկուլտուրականութեան մի յայտնի ապացոյց չէ։ Մթթէ չի կարելի մի քաղաքի մէջ ընդհանուր սովորութիւն դարձնել խանութները օրուայ մի որոշ ժամանակ, որոշեալ ժամերին՝ բաց պահել, որով թէ ծառայողը և թէ խոզէինը, ազատուելով ժամալաճառութիւնից կարող լինեն իրանց ազատ ժամանակը ուրիշ աւելի հաճելի զբաղմունքների նուիրել։ Չէ որ այնքան տհաճելի ու ձանձրալի է երկար ժամերով, չոր, անմտաշահ գործով պարապել։ Երևակայեցէք ինչի նման է մեր՝ հէնց իրանց—«խոզէիններիս» դրութիւնը։ Դրանց ամենախոշոր տոկոսը նոյնիսկ ճաշը խանութում է ուտում։ Առաւօտուայ և իրիկուայ թէյն էլ այնտեղ են խմում. խոմ երեկոները կլուբում, կամ ուրիշ տեղերում էլ անպատճառ ուշանում են։ Այնպէս որ հայ խոզէինը առաւօտեան տանից դուրս է գալիս քնած թողնելով իր կնկան և երեկոյեան վերադառնալիս՝ նոյնպէս քնած է տեսնում նրան։ Սա ինչի՞ նման է, ինչ կեանք է՝ ամբողջ օրով հեռու ընտանիքից։ Հայի «ջանասիրութիւնն» էլ մեղ լաւ յայտնի է. նա երբէք տօները չի պահում։ Ուրեմն ազատ օր ենում է միայն կիրակին. այն ևս ինչի նուիրել, ինչի յատկացնել։

Անցեալ տարիներից մէկումն էր, որ Թիֆլիսի գործակատարները ցոյց սարքեցին, խանութները երեկոյեան ժամը 8-ին կողպելու համար։ Մի շարք խանութներ, միայն առժամանակ, ակամայ գործադրեցին այդ արդարացի պահանջը։ Այդպիսի դէպքերում քաղաքային վարչութիւնը կարող է օգնութեան հասնել, հրատարակելով պարտադիր կանոններ։ Անցեալ տարի, երբ Բերլինի խանութները երեկոյեան 7-ին կողպելու կանոն հաստատուեց, բողոքողներ դուռն, թէ քաղաքի կենդանութիւնը դադարում է փողոցներում։ Նոյն բողոքը գուցէ և մեզանում լսուի այդպիսի մի որոշման դէմ։ Բայց ինչ հիման վրայ։ Այժմ ակսիօմ է՝ «ամէն բանից վեր է մարդկային օգուտը»։ Երբ դուք իբրև անցորդ կամ զբօսնող անցնում էք փողոցով, գուցէ ձեզ համար հաճելի է տեսնել լուսաւորուած լայն ապակիներ, բայց մթթէ ձեր միտքը չպէտքէ զբաղուի ներսի տանջուածներով, որոնք առաւօտից մինչև երեկոյ ոտքի վրայ են, ընկճուած—մեքենայական ձանձրալի աշխատութեամբ։ Լաւ կը լինէր, այո, որ խանութները մինչև ուշ ժամանակ բաց լինէին, մանաւանդ դա մեր անկարգ ազգաբնակութեան համար մի յայտնի չափի դիւրութիւն է։ Լաւ կը լինէր, միայն եթէ ընդունուէր փոխծառայութեան սովորութիւնը. այնպէս որ, ծառայողների երկու խմբակ, օրուայ ընթացքում, կը ծառայէր փոխնիփոխ ժամանակի կէսը։ Բայց մեր խոզէինները, որ զլանում են ծառայող-

ների համար տարեկան մի քանի բուբլի՝ գրքի, լրագրի յատկացնելու համար, մի՛թէ երբ և իցէ կը յօժարին այդպիսի բանի։ Մենք ակամայից մի քիչ աւելի կանգ առինք այս հարցի վրայ, որովհետև նա շատ է հիւանդ, շատ է թարախոտ։

Արդ, այս դրութեան մէջ ծառայողը, հէնց դիցուք երեկոյեան 9 ժամին գործից ազատ լինէր. յոգնած, ջարդուած, օրուայ ընթացքում մաքուր օդից զուրկ, ի՞նչպէս նա կարող էր մտածել ընթերցանութեան մասին։ Վերջապէս նա շատ-շատ կը կարողանայ երեկոյեան մի ժամ ընթերցանութեան նուիրել. բայց չէ՞ որ այդպիսով նա մի «Մշակ»-ից աւելի բան չի կարող կարդալ։

Սա երևոյթի ընդհանուր պատկերն է. անշուշտ սակաւաթիւ տեղերում կը լինին աւելի պատեհ հանգամանքներ, որոնք դիւրութիւն կը տան ծառայողին մի փոքր միջոց զբաղուել ընթերցանութեամբ։ Բայց շատ աննշան են այդ բացառութիւնները։ Այդ տխուր իրողութիւնն է պատճառներից մէկը, որ ծառայող դասակարգը ընթերցողների այնքան ողորմելի թիւ է տալիս։

Անշուշտ այս ասածներիցս չպէտք է ենթադրել, թէ ծառայողների անընթերցասիրութեան պատճառը միմիայն խոզէ-խնների վարմունքը, ծառայութեան կարգերն են և թէ ծառայողները գլխապատառ կը նետուէին գրքերի, լրագրների վրայ, հէնց որ վերանային այդ կարգերը։ Ո՛չ, ծառայողներն էլ, իրանց հերթին, մեծ մասամբ դատարկապորտ—կիսակիրթներ են ու անտարբեր՝ ինչպէս դէպի հասարակական հարցերը, նոյնպէս և դէպի գրականութիւնն ու ընթերցանութիւնը։ Բայց մեր յօդուածի նպատակն է մատնանիշ լինել միայն ծառայողին շրջապատող աննպաստ պայմանների վրայ, որոնք խեղդում, ոչնչացնում են եղած սակաւաթիւ ծառայող-ընթերցողների ցանկութիւնները ու փափագը և այդ միջավայրում ընկածներին թոյլ չեն տալիս ընթերցանութեան ճաշակ ստանալ և կրթութեան ու զարգացման պահանջ զգալ։ Անշուշտ այս վերջին հանգամանքով պէտք է բացատրել ծառայող դասակարգի յետամնաց, անկիրթ վիճակը։

«Մուրճ»-ի պէս մի ամսագիր, որ ընդամենը հազիւ 900 բաժանորդ ունի, միայն Թիֆլիսի պէս բազմահայ մի քաղաքում առնուազը պիտի ունենար բաժանորդների նոյնքան թիւ։ Բայց այդպէս չէ։ Ելի վիճաբեցէք այս երևոյթի արմատը...

Այսքանը այն արտաքին պայմանների մասին, որոնցով շրջապատուած է ծառայողը. իսկ այժմ քրքրենք այս ներքին-բարոյական պայմանները, ուր դանւում է նա։ Հարցի այս կող-

մըն աւելի հետաքրքիր է։ Արդէն ասացինք, որ մեր խոզէինական շրջաններում դեռ ևս տիրում է այն համոզմունքը, թէ ծառայողը, գործակատարը չպէտք է զբաղուի կողմնակի գործերով, մանաւանդ ընթերցանութեամբ։ Մեր պատուելի տէրերը անշուշտ դրա համար ունեն իրանց տեսակէտի պատճառաբանութիւնը և անշուշտ այն, որ ծառայողը զբաղուելով ընթերցանութեամբ, կը գրաւուի նրանով և սակաւ ուշադրութիւն կը դարձնէ գործի վրայ։ Թէ երբեմն այդպիսի ծուռ հասկացողութիւնները որ աստիճան ծայրահեղութեան են հասնում, ցոյց է տալիս հետևեալ չափազանց պերճախօս օրինակը, որը կարելի է համարձակ կերպով մեր խոզէինական աշխարհի հասկացողութեան ընդհանուր բնորոշումը համարել։

Ես ծառայող եմ։ Մի օր իմ «խոզէինը», որպէսզի հասկացնէ ինձ, թէ ինչքա՜ն չորս և աւելի տարիներ շարունակ գրբասենեակում ինձ «լաքէյի» պաշտօնի մէջ է պահում, մինչդեռ ընդունակութիւններով և զարգացումով ինձանից աւելի պակաս մարդկանց յանձնում է լուրջ և պատասխանատու գործեր, ասում է.—«Դու գործին լաւ ուշադրութիւն չես դարձնում. չես հետևում, չես ձգտում սովորել։ Դրա փոխարէն դու զբաղուած ես կամ ծառայութեամբ, կամ գրականութեամբ։ Դու քեզ փչացրել ես պարզապէս։ Թող այդ չիմար բաները, նուիրուիր գործիդ, այ, ինչպէս այս տղան, որ միշտ քամուում է, ուզում է քիթը ամեն բանի մէջ կոխել, ամեն բան սովորել։ Այն ժամանակ քեզ էլ լաւ գործ կը յանձնենք, լաւ ռոճիկ կը տանք»։

Մի խօսքով ընթերցողը գուցէ կարծէ, թէ ես իրօք այն գիժ գրամոլներից, «գրքի խենթերից» մէկն եմ, որ պաշտօնը թողած՝ անուշադիր, միշտ գրքի, գրելու յեռևից է ընկած։ Բարեբախտաբար (որովհետև եթէ այդպէս լինէր, իմ ծառայութիւնը ձրի էլ չէին ընդունի և ես կը ինայի քաղցած), թէ դժբախտաբար այդպէս չէ։ Ես միայն սահմանափակ չափով ընթերցասէր եմ, սիրում եմ գրականութիւնը և օրուայ մէջ ունեցած երկու ժամ ազատ ժամանակ դրան եմ նուիրում։ Հիմա դուք փորձեցէք այդպէս խօսող «խոզէինին» հասկացնել, թէ լաւ առևտրական, լաւ վաճառական, ինչպէս և լաւ գործակատար լինելու համար հարկաւոր է բազմակողմանի զարգացում, իսկ դրան ձեռք բերելու հանրամատչելի միջոցը՝ ընթերցանութիւնն է —չէք կարող։ Նրա գլխում խօսում է մեխը։ Ես արդէն «փչացած» եմ առևտրականութեան հմար, որովհետև սիրում եմ կարդալը և չեմ քամուում։ Մեր «խոզէիններին» միշտ դուր են գալիս այն տեսակի ծառայողները, որոնք զուրկ են բարոյական պրինցիպներից, անտարբեր են ղէպի հասարակական և-

բնոյթները. առջևից սողում, քամստում, իսկ յետևից հայհոյում են և իրանց նամակների տակ միշտ ստորագրում են «խոնարհ ծառայ» բառերով։

Ուշադրութեան արժանի է այն խօսքը, թէ մարդ «կամ ծառայութեամբ պէտք է զբաղուի, կամ գրականութեամբ»։ Ըրքան դառը հեգնութիւն կայ այդ խօսքի մէջ, թէև այդ չի զգում պարոն «խոզէինը»։ Գրականութեամբ զբաղուել... Իսկ ո՛վ կը տայ ինձ իմ ամսական 16 րուբլի ռոճիկը. հայոց գրականութիւնը... Չեզ նման անհետաքրքիր անհատներից բաղկացած հասարակութիւնը, պարոն «խոզէին», մեր այնքան խղճուկ գրականութիւնը և մի քանի հատիկ գրական տաղանդները չի կարողանում ապահովել. իսկ ինչ կը լինէր, եթէ ամեն մի գրականութիւնը սիրող ուզենար գրականութեամբ զբաղուել։ Հեգնեցէք, ինչո՞ւ չէ. չէ՞ որ ձեր պատուհաններից ամեն ժամանակ, ամեն ժամ լսելի են կուշտ և այնքան անողորմ ծիծաղի ձայները... չէ՞ որ դուք աշխարհում ձեր փորից ու փողից աւել բան չէք ուզում ճանաչել... և ինչքան շատ էք դուք...

Աւ. Գուլօեան

ԾՈՂԵՐ ԽՍԻԱՐԻ ՄԷՋ

«Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Միացեալ ընկերութեան» 1903—1904 ուսում. տարեշրջանի «Տեղեկագրից» քաղում ենք հետևեալ մխիթարական տեղեկութիւնները։

Պարոն *Տիգրան Աֆրիկեանը*, որ իր հաշուով պահում էր 2 երկսեռ դպրոց Բարանդուզ գաւառի Թրքախօս Բաբառու և Դիզաթէքի հայ գիւղերում 4—5 տարուց ի վեր, կամենալով մի իրական, շօշափելի ծառայութիւն մատուցանել լքուած, անտեսուած քաչքայուած և իր ազգային առանձնայատկութիւնները կորցրած պարսկահայ գեղջուկի կրթական գործին, յղացել է մի վերին աստիճանի մարդասէր միտք, այն է՝ 39 հայարնակ գիւղ ունեցող, և 1200 տնից բաղկացած Ուրմի գաւառը իր ըղձակայքով պատել դպրոցական ցանցով, բաբերարը որոշել է այդ դպրոցների թիւը, որոնք երկսեռ պիտի լինին, առայժմ հաս-